

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ «ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐ»
ՎԵՊՈՒՄ**

ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆ,

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *lusinegalstyan72@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v1i44.51

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպը, մասնավորապես Պապի կերպարը՝ զորյանական դիտանկյունից: Փորձ է արված բացահայտել, թե իր ժամանակների ի՞նչ իրադարձություններ են մղել գրողին քսաներորդ դարում խորհելու հայ պատմագրության համար այդքան արդիական դարձած հայոց պատմության ամենադրամատիկ շրջաններից մեկի շուրջ:

Վեպն արդիական նշանակություն ունի թե՛ հայոց պետականության կորստի վտանգի, թե մեր երկրի երկու նոր աշխարհաքաղաքական խոշոր բևեռների արանքում պառակտվելու կամ բզկտվելու տեսանկյունից: Եթե չորրորդ դարում Հայաստանը պառակտվում էր Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, ապա պատմության դերակատարներն այժմ փոխվել են, բայց մարտահրավերը մնում է նույնը:

Ս. Զորյանի «Պապ թագավորը» քսաներորդ դարի հայ վիպագրության լավագույն երկերից է, պատմության իմաստն ըմբռնելու և պատմական ընդհանրացումների առումով անգնահատելի գեղարվեստական արժեք է:

Բանալի բառեր՝ պատմական անցյալ, արդիականություն, պատմավեպ, դրամատիզմ, ազգային ճակատագիր, անհատ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զորյանն իր պատմավեպի նյութը քաղել է հայոց պետականության ամենածանր շրջաններից մեկի՝ չորրորդ դարի բարդ իրադարձություններից: Հայ ժողովրդի համար ճակատագրական այս ժամանակաշրջանին անդրադարձել է նաև

մեծ վիպասան Ռաֆֆին՝ իր ժամանակի ազգային շարժումների արդիական ծրագրերին արձագանքելու համար:

Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպում ազգային ճակատագիրը դիտարկվում է անհատի կերպարի միջոցով: Վեպի առանցքում և՛ պատմական խոշոր անհատի, և՛ նրա հետ նույնացող ազգի ճակատագիրն է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեթոդաբանության հիմքում ընկած է Ստեփան Զորյանի պատմավեպերի համակարգի ամբողջական ընկալման, ուսումնասիրվող նյութի համադրման սկզբունքը: Հոդվածում բացահայտվում ու վերլուծվում են պատմական ժամանակաշրջանը, կառուցվածքը, կերպարակերտման համակարգը, նորարարական արժեքը:

Կիրառվել են համադրական, համեմատական, վերլուծական մեթոդները, որոնց միջոցով փորձել ենք բացահայտել Զորյանի աշխարհընկալման մեթոդներն ու եղանակները, կերպարաստեղծման յուրահատկությունները՝ պահպանելով գեղարվեստական երկերի ուսումնասիրության որոշ սկզբունքներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Եվգենի Զամյատինն իր «Գեղարվեստական արձակի տեխնիկա» գրքում պատմական իրադարձությունը համեմատում է լեռան հետ, որի վրա գտնվելով թփեր ու քարեր կարելի է տեսնել, իսկ լեռը (այսինքն՝ պատմությունը) ամբողջությամբ հնարավոր է տեսնել (ըմբռնել և պատկերել) միայն հեռվից: «Վերջին տարիների մեծ իրադարձությունները՝ համաշխարհային պատերազմ, ռուսական հեղափոխություն,- գրում է նա,- այն լեռն են, որի վրա մենք դեռևս թփեր, որդեր ու քարեր ենք տեսնում, իսկ լեռը կարող ենք տեսնել՝ հեռանալով տասնյակ տարիներ: Եվ միայն այդ ժամանակ կստեղծվի իսկական գեղարվեստական գրականությունը պատերազմի և հեղափոխության մասին» (Замятин Е., 2018): Եվ իրոք, պատմության խորհուրդն ու իմաստը հնարավոր է ըմբռնել միայն այն ժամանակ, երբ պատմական նշանակության որևէ իրադարձություն, փուլ կամ շրջան հարաբերականորեն ավարտված և ամբողջացած կարել է համարել, ավելին՝ միայն այդ ժամանակ է հնարավոր դիտարկել ու հետազոտել, թե ինչպես է չհասկացված, չիմաստավորված, հետևապես չհաղթահարված անցյալը կամ պատմությունը ներխուժում ներկա՝

պատմավեպի ժանրի բարձրագույն հնարավորություններից մեկը, և այս իմաստով ավելի ճիշտ է խոսել ոչ թե ժամանակների զուգահեռի, ինչպես մեզանում է ընդունված, այլ ներկայում շարունակվող պատմական անցյալի մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմը պատկերող և պատերազմից տարիներ անց լույս տեսած վեպերից լավագույնները նույնիսկ, ինչպես օրինակ՝ Սերո Խանգադյանի «Մեր գնդի մարդիկ» (1950) կամ Հրաչյա Քոչարի «Մեծ տան զավակները» (1952), այս իմաստով պատմությունը չիմաստավորած, պատմական իրադարձությունը ռազմական գործողություններով սահմանափակող վեպեր են մնում, որ բացառապես գրականության պատմության հետաքրքրության և ուսումնասիրության առարկա կարող են լինել, մինչդեռ պատերազմի ընթացքում լույս տեսած պատմավեպերը՝ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը» (1943) ու Ստեփան Զորյանի «Պապ թագավորը» (1944) քսաներորդ դարի հայ վիպագրության լավագույն էջերից են, պատմության իմաստն ըմբռնելու և պատմական ընդհանրացումների առումով անգնահատելի գեղարվեստական արժեքներ: Մեզանում ռոմանտիզմից մինչև մեր օրերը պատմավեպն ընկալվել և ընկալվում է որպես ներկային «հրատապ» արձագանքող, պատմական անցյալի միջոցով ներկան մեկնող ու իմաստավորող ժանր: «Վարդանանքը», օրինակ, Մեծ հայրենական կամ Երկրորդ համաշխարհային պատերազմի առիթով գրված և ժամանակի ոգին ու պաթոսն արտահայտող վեպ է և իսկապես համոզիչ ու տպավորիչ է գրողի՝ ժողովրդական կամքի և տարերային ոգու հանդեպ ունեցած հավատը, և այդ ոգին ու կամքը, որ ի զորու են ուղղորդել պատմությունը, ճիշտ է որսացել նաև Գրիգոր Խանջյանն իր համանուն կտավում: Բայց սա խորհրդային գաղափարաբանությանը բնորոշ աշխարհընկալում է: Որպես պատերազմի տարիներին լույս տեսած վեպ՝ Զորյանի «Պապ թագավորը» այլ խնդրադրումներ և պատմության, մասնավորապես հայոց պատմության այլ ընկալում, մեկնություն ու իմաստավորում է բերում՝ արդիական, ոչ միայն պատմավեպի գրության ժամանակներում, այլև չորրորդ դարից սկսած մինչև մեր օրերը:

«Ինքնակենսագրական նոթերում» Զորյանը գրում է. «Իմ հետաքրքրությունը և իմ սերը դեպի մեր պատմությունը ինձ մղեց դեպի պատմական թեմատիկան, և ես գրեցի նախ «Սմբատ Բագրատունի» պատմվածքը, ապա «Պապ թագավորը»: Ինձ

միշտ զարմացրել և հիացրել են այն հերոսական ջանքերը, որ գործադրել են մեր պապերը՝ երկիրն ու ժողովուրդը օտարի նվաճումից, բռնությունից ազատ պահելու: Եվ ահա, երբ բռնկվեց համաշխարհային Երկրորդ պատերազմը, ես հրատարակեցի «Պապ թագավորը»՝ որպես հայրենիքի պաշտպանության օրինակ» (Զորյան Ս., 1977):

Կարևոր մի դիտարկում. Զորյանը վեպի հրատարակության մասին է խոսում («հրատարակեցի»), իսկ սա արդեն նշանակում է, թե անկարելի է նույնացնել գրքի լույս ընծայման առիթն ու վեպի ստեղծման պատճառը: Զորյանը «Պապ թագավորն» սկսել է գրել 1938-ին, երբ պատերազմը դեռ չկար, և եթե գեղարվեստական թարգմանություններով չընդմիջեր, անշուշտ կավարտեր ոչ թե չորս տարի անց, այլ մինչև պատերազմը: Հարց է ծագում, թե իր ժամանակների ի՞նչ իրադարձություններ են մղել գրողին քսաներորդ դարում խորհելու հայ պատմագրության համար այդքան արդիական դարձած հայոց պատմության ամենադրամատիկ շրջաններից մեկի՝ չորրորդ դարի անցքերի շուրջ, դար, որ ըստ էության մեր պատմավիպագրության կողմից ամենից շատ արծարծված շրջաններից մեկն է, և ներկայում այն նորից արդիական է դառնում թե՛ հայոց պետականության կորստի վտանգի, թե՛ մեր երկրի երկու նոր աշխարհաքաղաքական խոշոր բևեռների արանքում պառակտվելու կամ բզկտվելու տեսանկյունից, և եթե չորրորդ դարում Հայաստանը պառակտվում էր Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, ապա պատմության դերակատարներն այժմ փոխվել են, բայց մարտահրավերը մնում է նույնը: Եվ հայոց ազգի՝ Զորյանի վեպում պատկերված պառակտումը, որ դեռ «Սամվել»-ում էր առկա, իբրև ցավ ու մտահոգություն ապրում է այս անգամ Պապը: «Մենք ևս մեր հերթին բաժանվում ենք երկու մասի, որոնցից մեկն ասում է. «Եկե՛ք աղոթենք պարսիկի նման», մյուսը՝ «աղոթենք հռոմի նման»... Ահա մեր դժբախտությունը Երեմիա: Մի խումբ ձգտում է մի կողմ, մի այլ խումբ՝ այլ կողմ, և սակավները միայն հենվում են սեփական հողին, ինչպես տեսնում եմ... Իսկ այսպիսի երկրում չգիտեմ ինչպես կարելի է թագավորել, Երեմիա» (Զորյան Ս., 1983): Սա մեր ազգի և մեր պատմության մեծագույն դժբախտությունն ու ողբերգությունն է, և Զորյանը ավելի քան խորիմաստ նկատառումով է ընտրել Պապի կերպարը՝ ցույց տալու համար այդ ողբերգության չհասկացված զոհերից մեկին՝ Պապ թագավորին: Սպարապետ Մուշեղ

Մամիկոնյանի օգնությամբ Բյուզանդիայից գալով և պարսիկներին երկրից վտարելով ու բազմելով գահին՝ Հռոմի «դրածո» արքան Հայաստանի համար քաղաքական ինքնուրույնության ուղի է բռնում, բայց հարուցում նախարարների թշնամանքը, երբ արքունի զորքն ուժեղացնելու համար զինվորներ է պահանջում նրանցից, ժողովրդի դժգոհությունը, երբ փակել է տալիս կուսանոցներն ու անկելանոցները, հոգևորականության վրդովմունքը, երբ վանքերը զրկում է հարկահավաքման իրավունքից: Երբ կաթողիկոս Ներսեսը նրա հետ զրույցից հետո դուրս է գալիս ու հանկարծամահ լինում, եկեղեցականությունը ստահող լուրեր է տարածում, թե արքան թունավորել է կաթողիկոսին: Իսադն ու Կյուրեղը Հայաստանում Բյուզանդիայի դեսպան Տերենտի մոտ ամբաստանում են Պապին՝ որպես պարսկասեր թագավորի... Զրպարտանքների, թյուրըմբռնման ու ազնիվ մտադրությունների խեղաթյուրման շրջանն աստիճանաբար ընդլայնվում է իբրև ճակատագիր՝ Պապի կերպարի շուրջ սեղմվելու համար: Իրականում Պապն ու իր անձի շուրջ ձևավորված նրա կերպարը խզվում և անճանաչելիության աստիճան հեռանում են միմյանցից: Զորյանի վարպետության իրացումներից մեկն այս երկու կերպարների կերտումն ու բախման ողբերգությունը ցուցադրելն է, թեև Պապի իրական կերպարի և նրանից դուրս իր կերպարի ընկալման մեջ արդեն իսկ խոր դրամատիզմ կա, և Զորյանը ցույց է տալիս, թե ինչպես է այդ դրամատիզմը սրվելով վերածում ողբերգության: Պապն անզոր է հանրության, ժողովրդի, գուցե ճիշտ կլինի ասել ամբոխի պատկերացումներում ձևավորված սեփական կերպարի հանդեպ, անզոր է կանխել այդ կերպարի ողբերգական «զարգացումը», որ իր համար վերածվում է ճակատագրի. ողբերգության վեհությունն արքա լինելով հանդերձ Պապի՝ սեփական ճակատագիրը կանխելու անզորության փաստի մեջ է: Զորյանը նրան փախուստի մի հնարավորություն է ընձեռում ճակատագրից. Պապը փախուստի է դիմում՝ հանդիպելով Վաղեսի կասկածելի հյուրընկալությանը և Հայաստանում Տերենտի հրավերով կազմակերպված խնջույքին դավադրաբար սպանվում: Զորյանի վեպում անտիկ ողբերգությանը բնորոշ ճակատագրականության ընկալում կա: Եթե որևէ մի նախարար կամ նախարարի որդի, դիցուք, Սամվելը, փորձեր «փրկել» հայրենիքը, նրա ջանքերի տապալումը ողբերգության այն վեհությունն անշուշտ չէր ունենա, ինչ արքայի կործանումը:

Որպես իշխանի որդի՝ Սամվելի կերպարը Ռաֆֆու վեպում վեհանում է անձից վեր բարձրացող արարքի շնորհիվ, իսկ Պապի կերպարը վեհանում է ճակատագիրը հաղթահարելու անզորությամբ, և ողբերգականությունը շեշտված է, որովհետև արքան պետության և ժողովրդի հզորությունը խորհրդանշող ուժ է՝ ուժ, որ անզոր է գտնվում կանխել իր ճակատագիրը, իսկ այդ ճակատագիրը արքաների դեպքում նույնանում է ազգի պատմության հետ: Սա կարևոր դիտարկում է, քանզի Ջորյանի վեպում ազգային ճակատագիրը դիտարկվում է հենց անհատի կերպարի միջոցով: Պապի կերպարին ճակատագրականության առանձին դրոշմ են հաղորդում ոչ միայն արքայական անզորությունը, այլև փոքրիկ, բայց կարևոր մանրամասներ՝ տխուր մտածկոտությունը, դեմքի աջի դողն ու մենության զգացումը վեհ գաղափարների իրագործման հարցում: Նա դառնում է իրենից հզոր հանգամանքների զոհը: Այսպիսով՝ «Պապ թագավոր» վեպի առանցքում և՛ պատմական խոշոր անհատի, և՛ նրա հետ նույնացող ազգի ճակատագիրն է:

Հայ պատմավեպն ըստ էության պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ առաջինում այն վեպերն են, որոնց կիզակետում պատմական անհատն է: Այդ վեպերի շարքին կարելի է դասել «Գևորգ Մարգարետունին», «Սամվելն» ու «Պապ թագավորը», երկրորդ թևի վեպերը կա՛մ պատմական էպոպեաներ են, կա՛մ պարզապես դարաշրջանի իրադարձություններն ու ոգին արտահայտող վեպեր՝ Դեմիրճյանի «Վարդանանքը», Միքայել Շաթիրյանի «Արծաթե դարը», Վարդան Գրիգորյանի «Դար կորստյանը»: Մեր հարցադրումը որոշակիանում և մոտենում է Ջորյանի վեպի պատմական «նախատիպի» խնդրին: 1937 թվականից մեկ տարի էր անցել, երբ Ջորյանն սկսեց շարադրել իր վեպը, որ բնավ «հայրենիքի պաշտպանության օրինակի» նմուշ չէր կարող դառնալ. այն (Նախշվանի և Ձիրավի ճակատամարտերի նկարագրությամբ հանդերձ) հերոսականության քարոզչական պաթոսից իսպառ զերծ և բացառապես ճակատագրապաշտության ու ողբերգականության ոգով տոգորված գործ է, ինչպես նկատեցինք արդեն: Անկասկած, Պապի կերպարի նախատիպը պետական բարձրագույն այր է, քանի որ վեպը, իրոք, ի տարբերություն «Վարդանանքի» և ժողովրդական ոգու, հայրենիքի հետ կապված պատմական անհատի խնդիր է բարձրացնում: Զարմանալի նմանություն է նկատվում Պապի՝ Ջորյանի վեպում նկարագրված սպանության

հանգամանքների և Աղասի Խանջյանի բոլորովին վերջերս արխիվային փաստաթղթերի միջոցով (Զատիկյան Հ., 2015) բացահայտված սպանության զուգահեռներում: Կասկած չի մնում, որ Պապի կերպարի նախատիպը հենց Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղարն է (1930-1936): Եվ եթե Զորյանի վեպը լույս է տեսել՝ խուսափելով գրաքննությունից, պատճառը, մեր կարծիքով, այն է, որ լույս է տեսել որպես «հայրենիքի պաշտպանության օրինակ» պատերազմի օրոք, և այն, որ Խանջյանի մահվան պաշտոնական վարկածը ինքնասպանությունն է մնում: Պապը Զորյանի վեպում կանխազգում ու չի կարողանում կանխել դավադրության նեղացող շրջանակը: Ըստ արխիվային նյութերի՝ Խանջյանը ևս գիտեր, որ «չի վերադառնա Երևան»: Ինչո՞ւ, որովհետև հալածանքների և քննադատության տարափների տակ (հիշենք, որ Զորյանի վեպում Պապը ևս հանրության կողմից չընկալված կերպար է) հայտնված Խանջյանը,- գրում է քաղաքական կոծկված սպանության արխիվային փաստաթղթերը վերլուծող հեղինակը,- նկատի ունենալով Բերիայի «աշխատառճը», կանխատեսում էր չարագուշակ ավարտը: Եվ այս փաստով պայմանավորված՝ մերժվում է նաև այն տեսակետը, որ նոր սահմանադրության ընդունման, Անդրֆեդերացիայի ցրման առիթով Խանջյանին այլ աշխատանք պիտի առաջարկվեր: Հավանաբար որոշ աղբյուրներից Խանջյանին հայտնի էր դարձել իր նկատմամբ իրականացվելիք հաշվեհարդարի մտադրությունը» (Զատիկյան Հ., 2015): Այն, որ Խանջյանը պատվիրակության խնջույքից հետո է սպանվում, Պապը՝ խնջույքի ժամանակ և ամենակարևորը՝ այն, որ թե՛ Պապը, թե՛ Խանջյանն ազգային քաղաքականություն էին վարում, հուշում են, որ պատահական համընկնման հետ գործ չունենք: Կերպարային այս զուգահեռի միջոցով Զորյանն առհասարակ խորհում է հայոց ճակատագրի ու պատմության ամենացավոտ հարցի շուրջ: Պատմության զուգահեռը նոր լույս է սփռում պատմական երևույթների վրա. Բյուզանդիայի՝ Հայաստանի հանդեպ վարվող քաղաքականության մեջ Զորյանն այդ կայսրության պատմական իրավահաջորդ Ռուսաստանի քաղաքականությունն էր տեսնում անկասկած: Զորյանի վեպում կա մտացածին ու կարևոր մի կերպար և նրա հետ կապված սիմվոլիկ մի պատկեր՝ պատմիչ Երեմիայի և նրա՝ մեզ չհասած, անհետացած մատյանի միջև: Այս կերպարը Զորյանը ստեղծել է՝ հակադրելու Փավստոս Բուզանդին և նրա

«պաշտոնական» պատմագրությանը: Պապի սպանության ժամանակ Երեմիայի չպահպանված մատյանը սիմվոլիկ բնույթ է ստանում: Բաթն ուղղում է սպանված Պապին ու տեսնում, որ Երեմիայի մատյանի «բոլոր էջերն արյունոտ էին»: Երեմիայի չպահպանված մատյանի պատկերով Զորյանն անտարակույս ակնարկում է վավերական ու չպահպանված պատմությունը, և դրա փոխարեն սրբագրված ու պահպանված պատմությունը, այսինքն Աղասի Խանջյանի ինքնասպանության վարկածը և դրան հակառակ սպանության արխիվային վկայությունների «ոչնչացումը»: Զորյանը մղում է խորհրդածելու նաև պատմության բնույթի մասին. իսկ եթե պատմությունն իրադարձությունների եղծված շարադրա՞նք է, և սերունդները սխալ հետևություններ են անելու և մոլորության մեջ են ընկնելու, մի՞թե դա է պատմությունը: Այս հարցադրումը Զորյանի պատմահայեցողության կարևորագույն դրույթներից է, բայց գրողի՝ պատմության հայեցողությունը շատ ավելի խոր շերտեր է բացահայտում հայ դասական պատմավեպի հետ զուգահեռներում: Իրականում արտաքին՝ այսինքն պատումի պլանում, հայ դասական պատմավեպի ավանդույթների շարունակությունը լինելով հանդերձ, ինչպես վերն ակնարկվեց, «Պապ թագավորը» նորարարական է պատմության իր հայեցակարգով: Ոճի և պատկերամտածողության առումով այն դեռ 19-րդ դարի պատմավեպի լավագույն էջերին է նմանվում: Թեկուզ մուտքը, որ Րաֆֆու «Սամվել» վեպն է հիշեցնում, մի տարբերությամբ. եթե «Սամվելը» Արարատյան դաշտի առավուտի, ապա «Պապ թագավորը» Արարատյան դաշտի աշնան նկարագրությամբ է բացվում: Բնապատկերը Րաֆֆու վեպում ընդմիջարկվում է («Չէր երևում միայն մարդը» նախադասությամբ) և զարմանալի նմանությամբ ընդմիջարկվում է նաև Զորյանի վեպում («չէին երևում այգեկուփ անողների աշխույժ խմբեր, չէր լսվում արևառ աղջիկների ու հարսների խաղողաքաղի զրնգուն երգը»): սա թերևս, ըստ հետարդիապաշտական գրականագիտության, կարելի էր բնորոշել իբրև միջտեքստային հղում, բայց իրականում մենք գործ ունենք դասական վեպի ավանդույթի պարզ շարունակության հետ: Զորյանի վեպում բնապատկերը դասական պատմավեպի նման հետագա իրադարձություններին նախապատրաստող մթնոլորտի ստեղծման գործառույթ է կատարում: Դասական պատմավեպին բնորոշ բազմամարդ տեսարանների, ճակատամարտերի,

արքունական սենյակների նկարագրական մանրամասներով ևս Ջորյանի վեպը դեռևս դասական պատմավեպի ավանդույթներն է շարունակում: Բայց կա մի էական տարբերություն, և դա պատմության ռոմանտիկական հայեցակարգից տարբերվող ընկալումն է: Եթե Րաֆֆու կամ Մուրացանի վեպերում անհատը, որին պատմության մեջ կրավորական դերակատարում է վերապահված կամ նախանշված, իր արժեքային համակարգի և հայրենասիրության շնորհիվ և կամքի ջանքով կարողանում է վեր բարձրանալ այդ կրավորականությունից ու փոխել իրադարձությունների հունը՝ ուղղորդելով պատմության ընթացքը, ինչպես Սամվելն ու Մարգալետունին, ապա Ջորյանից սկսած, իսկ այնուհետև նաև Պերճ Զեյթունցյանի («Արշակ Երկրորդ»), Լևոն Խեչոյանի («Արշակ արքա, Դրաստամատ Ներքինի»), Ջորայր Խալափյանի («Վասիլ Մեծ կամ կճուճների թագավորը») վեպերում հակառակն է. ցույց է տալիս, թե ինչպես է անհատը (արքան), որ կոչված է պատմությունը (պատմության տեղային մի հատված) ուղղորդելու, դառնում է անզոր, քանի որ հայտնվում է հանրության կարծիքի կամ համաշխարհային պատմության ցանցում: Այս գոյապաշտական անզորությունն էլ վերապրվում է որպես ողբերգություն և ճակատագիր: Ըստ Յուկիո Միշիմայի՝ «Պատմության և մարդկային կամքի փոխհարաբերության հեգնանքն այն է, որ կամքով օժտված անհատներն անխուսափելի տապալման են դատապարտված, «մասնակցությունը» պատմությանը կարող է լինել միայն ակամա» (Мисима Ю., 2021): Ջորյանը ցույց է տալիս, թե ինչպես են ականավոր անհատն ու ազգային ճակատագրերը բազմաթիվ հանգույցներով կախված համաշխարհային պատմությունը պայմանավորող մի շարք վճռորոշ հանգամանքների հետ, և սա իսկապես քսաներորդ դարին բնորոշ և ըստ էության գոյապաշտական աշխարհընկալում է: Սա պատմության ժամանակակից ընկալում է, և Ջորյանի վեպն ըստ էության դառնում է այն կարևոր, եթե ոչ անկյունաքարային երկը, որը կամրջում է դասական և արդիապաշտական՝ Պերճ Զեյթունցյանի, Վարդան Գրիգորյանի, Ջորայր Խալափյանի և Լևոն Խեչոյանի պատմավեպերը: «Պապ թագավորը», իրոք, պատմության իր հայեցակարգով նոր՝ գոյապաշտական կամ արդիապաշտական պատմավեպի նախակարապետն է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոշարադրյալից կարելի է նշել, որ՝

1. Հայ պատմավեպն ըստ էության պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ առաջինում այն վեպերն են, որոնց կիզակետում պատմական անհատն է: Այդ վեպերի շարքին է դասվում «Պապ թագավոր» պատմավեպը:

2. Պատմավեպում Պապի կերպարը վեհանում է ճակատագիրը հաղթահարելու անգործությամբ, և ողբերգականությունը շեշտված է, որովհետև արքան պետության և ժողովրդի հզորությունը խորհրդանշող ուժ է՝ ուժ, որ անգործ գտնվում կանխել իր ճակատագիրը, իսկ այդ ճակատագիրը արքաների դեպքում նույնանում է ազգի պատմության հետ:

3. Զորյանի այս պատմավեպը արդիական նշանակություն է ստանում ներկայում նոր աշխարհաքաղաքական խոշոր բևեռների արանքում պառակտվելու կամ բզկտվելու տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Զատիկյան Հ.** (2015). Աղասի Խանջյանի սպանության արխիվային վկայությունները. <https://Www.Grakantert.Am/Archives/6843>.
- Զորյան Ս.** (1977). *Ինքնակենսագրական նոթեր, Երկերի ժողովածու 12 հատորով* (Vol. 1). Երևան, «Սովետական գրող» հրատ.
- Զորյան Ս.** (1983). *Ինքնակենսագրական նոթեր, Երկերի ժողովածու 12 հատորով* (Vol. 8). Երևան, «Սովետական գրող» հրատ.
- Замятин Е.** (2018). *Техника художественной прозы*. Москва, «Рипол классик».
- Мисима Ю.** (2021). *Море изобилия*. Москва, Иностранка.

REFERENCE LIST

- Zatikyan G.** (2015). Arhivnye dokazatel'stva ubijstva Agassi Handzhyana (*Archival evidence of the murder of Agassi Khanjyan*). <https://Www.Grakantert.Am/Archives/6843>.
- Zoryan ul.** (1977). Avtobiograficheskie zametki, Sbornik stran v 12 tomah (*Autobiographical notes, Collection in 12 volumes*), (Tom 1). Erevan, "Sovetskij pisatel'" izd.
- Zoryan ul.** (1983). Avtobiograficheskie zametki, Sbornik stran v 12 tomah (*Autobiographical notes, Collection in 12 volumes*). (Tom 8). Erevan,

"Sovetskij pisatel'" izd.

Zamyatin E. (2018). Tekhnika hudozhestvennoj prozy (Fiction technique). Moskva, «Ripol klassik».

Misima YU. (2021). More izobiliya (Sea of abundance). Moskva, Inostranka.

РЕЗЮМЕ

КОНЦЕПЦИЯ ИСТОРИИ В РОМАНЕ "ПАП ТАГАВОР" СТЕПАНА ЗОРЯНА

ЛУСИНЕ ГАЛСТЯН

В статье мы рассмотрели исторический роман Ст. Зоряна "Царь Пап", в частности, образ Папа – с зоряновской точки зрения. Произведена попытка раскрыть, какие события своего времени подтолкнули писателя в двадцатом веке к размышлениям об одном из самых драматических периодах в истории Армении, ставшим столь актуальным для армянской историографии.

Этот роман актуален как с точки зрения угрозы потери армянской государственности, так и с точки зрения раздора или раскола нашей страны между двумя новыми геополитическими полюсами. Если в четвертом веке Армения разделялась между Византией и Персией, то действующие лица истории теперь изменились, но вызов остается прежним.

"Царь Пап" Степана Зоряна является одним из наилучших произведений армянской художественной литературы двадцатого века, обладает неоценимой художественной ценностью с точки зрения осмысления истории и исторических обобщений.

Ключевые слова: историческое прошлое, актуальность, исторический роман, драматизм, царь Пап, национальная судьба, индивид.

ABSTRACT

THE CONCEPT OF HISTORY IN STEPAN ZORIAN'S "PAP TAGAVOR" NOVEL

LUSINE GALSTYAN

In the article we examined the historical novel of St. Zoryan "The King Pap", in particular, the character of Pap – from Zoryan's point of view. It was made an attempt to

reveal what events of his time made the writer in the twentieth century to think over one of the most dramatic periods in the history of Armenia, which became so relevant for Armenian historiography.

This novel is relevant both from the point of view of the threat of the loss of Armenian statehood, and from the point of view of discord or split of our country between two new geopolitical poles. If in the fourth century Armenia was divided between Byzantium and Persia, then the actors of history have now changed, but the challenge remains the same.

“The King Pap” by Stepan Zoryan - one of the best works of Armenian fiction of the twentieth century, “King Pap” by Stepan Zoryan is one of the best works of Armenian literature of the twentieth century, it is of inestimable artistic value in terms of understanding history and historical generalizations.

Key words: historical past, relevance, historical novel, dramaticism, the King Pap, national destiny, individual.

Հոդվածը ստացվել է՝ 28.02.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 02.03.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 05.04.2023թ.